

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՌ ԱՐՏՈՒՐԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ  
ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 1920-ԱԿԱՆ-2023 ԹԹ.  
ԻՍԼԱՄԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՆԹԵԶԸ

Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական  
գիտությունների թեկնածուի զիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2024

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

պ.գ.դ., պրոֆեսոր

Ռուբեն Հովհաննեսի Մելքոնյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պ.գ.դ., պրոֆեսոր

Ռուբեն Կաղենի Կարապետյան

պ.գ.թ.

Արշակ Արթուրի Գևորգյան

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2024 թ. դեկտեմբերի 18-ին, ժամը 14:00-ին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ԲԿԳԿ-ի «Համաշխարհային պատմություն» 006 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է նոյեմբերի 15-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական

քարտուղար՝

պ.գ.թ., դոցենտ Ա. Ա. Փաշայան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՉԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Թուրքիայում իսլամի և ազգայնականության սինթեզի՝ որպես նոր քաղաքական ինքնության ուսումնասիրությունը հատկապես արդիական է այդ երկրի քաղաքական դաշտում գաղափարախոսությունների էվոլյուցիայի և հասարակական-քաղաքական փոխակերպումների ուսումնասիրման համատեքստում: 1923 թ. հանրապետության հիմնադրումից ի վեր տասնամյակներ շարունակ աշխարհիկության և կրոնականության գաղափարների միջև լարվածությունը կենտրոնական դեր է ունեցել թուրքական քաղաքական ինքնության ձևավորման մեջ՝ ի վերջո հանգեցնելով թուրք-իսլամական սինթեզի ձևավորմանը, որը հետագայում իր ուրույն զարգացման ուղին է անցել:

Սույթաֆա Քենալ Աթաթյուրքի առաջ բերած ազգայնականության մոդելը աշխարհիկ բնույթ ունի: Աթաթյուրքի բարեփոխումները նպատակ ունեին արդիականացնել Թուրքիան՝ նվազեցնելով կրոնի դերը հասարակական կյանքում: Խալիֆայության վերացմանը զուգահեռ կրոնական խորհրդանիշները սկսեցին դուրս մղվել հասարակական-քաղաքական դաշտից՝ առաջ բերելով արևմտյան արժեքների վրա հենված աշխարհիկ ազգայնական ինքնության նոր մոդել: Այս ինքնությունը մինևույն ժամանակ որոշակի առումով օտարեց հասարակության պահպանողական՝ հատկապես գյուղաբնակ շրջանակներին՝ դրդելով նրանց նոր փնտրտուքների: Այս երկփեղկվածությունը մշտապես արդիական մնաց՝ հետագայում իր դերն ունենալով քաղաքական զարգացումների վրա:

Չնայած Աթաթյուրքի առաջ բերած աշխարհիկության սկզբունքին, իսլամը շարունակում էր շոշափելի դեր խաղալ թուրքական հասարակության պահպանողական շերտի համար: 1950 թ. իշխանության եկած «Ժողովրդավարական» կուսակցությունը սկսեց թուլացնել կրոնական ինքնարտահայտման սահմանափակումները, ինչը հանգեցրեց իսլամի աստիճանական վերածնմանը քաղաքականության մեջ: Այս միտումն իր

բարձրակետին հասավ 2002 թ. իշխանության եկած «Արդարություն և զարգացում» կուսակցության (ԱԶԿ) օրոք, որն աստիճանաբար սկսեց զուգակցել իսլամական արժեքները թուրքական ազգայնականության հետ: Ռեջեփ Թայյիփ Էրդողանի ղեկավարած ԱԶԿ-ն կերտեց կամ ավարտին հասցրեց, ըստ էության, Թուրքիայի քաղաքական նոր ինքնությունը, որը համատեղում է կրոնական բաղադրիչը ազգայնականի, երբեմն՝ ազգայնամոլականի հետ: Սինթեզը հնարավորություն տվեց միավորել կրոնական և ազգային-սոցիալական-պահպանողական ընտրազանգվածին՝ այլընտրանք առաջարկելով աշխարհիկ ազգայնականության քեմալական նախագծին:

ԱԶԿ առաջարկած մոդելը տարբերվում է ոչ միայն քեմալական մոդելից, այլև առավել ճկուն է, քան ԱԶԿ-ին նախորդած պահպանողական-կրոնամետ կուսակցությունների մոդելները: Էրդողանի ղեկավարած ուժն առաջ քաշեց նաև ազգայնական հոռետորաբանություն՝ դիրքավորվելով որպես Թուրքիայի իսլամական ժառանգության և ազգայնականության պաշտպան: Իսլամի և ազգայնականության սինթեզը ոչ միայն օգնել է ԱԶԿ-ին ամրապնդել քաղաքական իշխանությունը, այլև վերափոխել է Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականությունը:

Թեմայի արդիականության բաղադրիչներից է այն, որ կրոնի և ազգայնականության սինթեզը վերաբերում է նաև արտաքին քաղաքականությանը: Ժամանակակից աշխարհում և քաղաքականության մեջ կրոնի ու ազգայնականության զուգակցման առկա միտումը համարվում է զարգացման ներուժ ունեցող կարևորագույն գործոն: Աշխատանքի մեջ ներկայացված սինթեզը նաև ընդհանուր պատկերացում է տալիս այն մասին, թե ինչպես են քաղաքական ղեկավարները զուգահեռաբար օգտագործում կրոնական և ազգային խորհրդանիշները քաղաքական նոր ինքնության ձևավորման համար:

Ուսումնասիրության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել Թուրքիայում իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության կողմից իսլամի ու ազգայնականության սինթեզի գաղափարախոսության ձևավորումը, զարգացման հիմնական փուլերն ու առանձնահատկությունները՝ 1920-ականներից մինչև 2023 թթ. քաղաքական գործընթացների գաղափարական և պատմական համապատկերում:

Այդ նպատակով ուսումնասիրության ընթացքում առանձնացրել ենք հետևյալ խնդիրները.

- Քննարկել Թուրքիայի Հանրապետության վաղ շրջանում «քաղաքական իսլամի» դրսևորումներն ու դրա հիմքում ընկած իրադարձությունները:
- Ընդհանուր գծերով լուսարանել թուրքական հասարակական-քաղաքական դաշտի վրա իսլամի և ազգայնականության ներազդեցությունը հանրապետության գոյության ողջ ընթացքում:
- Ուսումնասիրել իսլամի ու ազգայնականության դերը 1960-1970-ական թթ. քաղաքական կուսակցությունների և գաղափարախոսությունների ստեղծման հարցում:
- Դիտարկել ԱԶԿ իշխանության շրջանում «քաղաքական իսլամի» և ազգայնականության զուգակցման քաղաքականության դրսևորումներն ու առանձնահատկությունները:
- Վերլուծել ԱԶԿ կառավարման շրջանում իսլամի ու ազգայնականության սինթեզի դրսևորումները ներքին ու արտաքին քաղաքականության մեջ:

Ատենախոսության ժամանակագրական շրջանակները: Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է Թուրքիայի Հանրապետության ստեղծման ժամանակահատվածից՝ 1920-ականներից մինչև 21-րդ դարի առաջին երկու տասնամյակներն ընկած շրջանը: Որպես ժամանակագրական վերջնակետ են ընտրված 2023 թ. նախագահական ու խորհրդարանական ընտրությունները: Հատուկ ուշադրություն է դարձված խնդրո առարկա թեմայի տեսանկյունից

հատկապես կարևորություն ներկայացնող ժամանակային փուլերի և դեպքերի վրա:

**Ուսումնասիրության տեսամեթոդական հիմքերը:** Ատենախոսության մեջ հիմնականում կիրառվել է պատմահամեմատական և համադրական մեթոդը՝ աղբյուրների և գրականության քննական վերլուծության մոտեցմամբ: Աշխատանքը գրելիս օգտագործվել են նաև պատմագիտական ուսումնասիրման ընդհանուր՝ ժամանակագրական և պատմական պարբերացման գործիքակազմերը:

**Ատենախոսության գիտական նորույթն ու կիրառական նշանակությունը:** Ատենախոսությունը հայկական գիտական միջավայրում առաջին փորձն է հնարավորինս ամբողջական և համակողմանիորեն ներկայացնել Թուրքիայի Հանրապետության պատմության հոլովությունում իսլամի և ազգայնականության սինթեզի դրսևորումները՝ հասարակական-քաղաքական զարգացումների, պատմական շրջափուլերի և դեպքերի քննության համապատկերում:

Ատենախոսությունը կարող է կիրառական նշանակություն ունենալ Թուրքիայի Հանրապետության պատմության, քաղաքականության մեջ իսլամի և ազգայնականության գաղափարների վերաբերյալ հետագա պատմագիտական, հասարակագիտական և քաղաքագիտական հետազոտությունների համար, ինչպես նաև ԲՈՒՀ-երում մասնագիտական ֆակուլտետներում 20-21-րդ դարերի Թուրքիայի պատմությանը, քաղաքականությանը վերաբերող դասընթացների շրջանակներում: Ատենախոսության առանձին թեզեր կարող են օգտակար լինել Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության որոշակի ուղղությունների մշակման, ինչպես նաև գործնական կիրառման համար:

**Ուսումնասիրության փորձաքննությունը:** Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնի կողմից, իսկ դրա հիմնադրույթներն արտացոլված են հեղինակի՝ գիտական պարբերականներում հրապարակված

հոդվածներում: Ատենախոսությունում ընդգրկված տարբեր խնդիրներ ներկայացվել են նաև միջազգային գիտաժողովներում և աշխատաժողովների շրջանակում:

**Հետազոտության աղբյուրագիտական հիմքը և հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը:** Ատենախոսության համար հիմք են ծառայել հայերեն, ռուսերեն, թուրքերեն, անգլերեն մենագրություններ, հոդվածներ, տպագիր արխիվային և այլ փաստաթղթեր, թուրքական մամուլի հրապարակումներ, ինչպես նաև տեսաձայնային (յութուբյան) նյութերը: Աշխատանքում օգտագործվել են տարբեր տարիներին վերաբերող պետական փաստաթղթեր ու արձանագրություններ, մասնավորապես՝ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) տարբեր գումարումների նիստերի արձանագրություններն<sup>1</sup> ու ԹՀ պաշտոնաթերթը (T. C. Resmi Gazete), որտեղ հրապարակվել են պետական որոշումներ և օրենքներ: Ատենախոսության մեջ ներկայացվել են Թուրքիայի տարբեր կառավարությունների, քաղաքական կուսակցությունների ծրագրեր, հոչակագրեր, հայտարարություններ<sup>2</sup>:

«Հանրապետական ժողովրդական» կուսակցության (1923-1950 թթ.) և «Ժողովրդավարական» կուսակցության իշխանության շրջանում (1950-1960 թթ.) հասարակական-քաղաքական դաշտում իսլամի դերի մասին ընդհանուր պատկերացումներ կազմելու համար օգտակար է եղել խորհրդային շրջանի հայ պատմաբան Բ. Կոնդակչյանի աշխատությունը<sup>3</sup>, ինչպես նաև Մ. Ալբայրաքի մենագրությունը<sup>4</sup>: Հանրապետության տարբեր շրջանների իրադարձությունների լուսաբանման համար հատկապես օգտակար է եղել ակադեմիկոս Ռ. Սաֆրաստյանի խմբագրությամբ և համահեղինակությամբ հրատարակված

<sup>1</sup> Türkiye Büyük Millet Meclisi Tutanağı (Zabıt Ceridesi).

<sup>2</sup> Hükümetler, Programları ve Genel Kurul Görüşmeleri, Ankara, 2013.

<sup>3</sup> Кондакчян Р.П., Турция. внутренняя политика и ислам, Ереван, 1983.

<sup>4</sup> Albayrak M., Türk Siyasi Tarihinde Demokrat Parti (1946- 1960), Ankara, 2004.

Թուրքիայի Հանրապետության պատմությանը վերաբերող կոլեկտիվ մենագրությունը<sup>5</sup>:

Թուրքիայի քաղաքական դաշտում իսլամի ու ազգայնականության գաղափարների ուսումնասիրության համատեքստում հարկ է առանձնացնել Հ. Յավուզի<sup>6</sup>, Բ. Յեշիլդաջի<sup>7</sup>, Բ. Քարփաթի<sup>8</sup>, Հ. Փոռլթոնի<sup>9</sup>, Վ. Տեր-Մաթևոսյանի<sup>10</sup> և Հ. Օզնյուրի<sup>11</sup> աշխատությունները, ինչպես նաև «Քաղաքական միտքը ժամանակակից Թուրքիայում» շարքի «Իսլամականություն» հատորը<sup>12</sup>, որում թուրքական քաղաքականության մեջ «քաղաքական իսլամի» երևույթը ներկայացված է ամենատարբեր դիտանկյուններից: ԱԶԿ շրջանում իսլամի ու ազգայնականության սինթեզի գաղափարական հիմքի ուսումնասիրության

<sup>5</sup> Սաֆրաստյան Ռ., Մելքոնյան Ռ. և ուրիշներ, Թուրքիայի Հանրապետության պատմություն, Երևան, 2018:

<sup>6</sup> Yavuz H., Cleansing Islam from the Public Sphere, Journal of International Affairs, vol. 54, no 1, New York, 2000, p. 21-42, նույնի Islamic Political Identity in Turkey, Oxford, 2003, նույնի Political Islam and the Welfare (Refah) Party in Turkey, Comparative Politics, vol. 30, no. 1, New York, 1997, pp. 63-82 նույնի Turkish Identity and Foreign Policy in Flux: The Rise of Neo-Ottomanism, Critique: Critical Middle Eastern Studies, 7(12), London, 1998, pp. 19-40 նույնի Erdoğan's Soft Power Arm: Mapping the Muslim Brotherhood's Networks of Influence in Turkey, Special Reports, Center for Research & Intercommunication Knowledge, Riyadh, 2020, p. 50 .

<sup>7</sup> Yeşilada B. A., Islamic Fundamentalism in Turkey and the Saudi Connection, Indianapolis, 1989, նույնի The Refah Party Phenomenon in Turkey, in Comparative Political Parties and Party Elites, Michigan, 1999, pp. 123-151 նույնի Realignment and party adaptation: The case of the Refah and Fazilet parties, Politics, Parties, and Elections in Turkey, Boulder, 2002, pp. 157-178 նույնի The AKP, religion, and political values in contemporary Turkey: implications for the future of democracy, Turkish Studies, 24(3-4), London, 2023, pp. 593-616.

<sup>8</sup> Karpat K. H., Türk Demokrasi Tarihi, İstanbul, 2010.

<sup>9</sup> Poulton H., The Top Hat, the Grey Wolf, and the Crescent: Turkish Nationalism and the Turkish Republic, New York, 1997

<sup>10</sup> Ter-Matevosyan V., Turkey, Kemalism and the Soviet Union: Problems of modernization, ideology and interpretation, Cham, 2019, նույնի Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում, Երևան, 2008:

<sup>11</sup> Öznür H., Ülkücü Hareket, Volume 1, Ankara, 1999.

<sup>12</sup> Modern Türkiye'de Siyasi Düşünce, İslamcılık, İstanbul, 2010.

համար էական նշանակություն են ունեցել Թուրքիայի նախկին վարչապետ Ա. Դավութօղլուի<sup>13</sup>, Ս. Չաղափթայի<sup>14</sup>, Ն. Կիրենի<sup>15</sup> աշխատությունները:

Ուսումնասիրվող ժամանակահատվածի հասարակական-քաղաքական կյանքի տարբեր զարգացումների լուսաբանման տեսանկյունից կարևոր են եղել են թուրքական պարբերական մամուլի հրապարակումները: Ատենախոսության մեջ օգտագործվել են «Ջաֆեր», «Վաթան», «Յենի Շաֆաք», «Միլլիյեթ» և «Հուրրիյեթ» պարբերականների հրապարակումները. այս թերթերի ընտրությունը պայմանավորված է դրանց գաղափարախոսական ուղղվածությամբ: Քաղաքական գործընթացների ուսումնասիրման տեսակետից զգալի արժեք են ներկայացնում նաև ուսումնասիրության առարկա հանդիսացող կուսակցությունների ծրագրային դրույթներն ու հռչակագրերը, որոնցում սահմանված են նրանց տեսական մոտեցումները կրոնի և ազգայնականության վերաբերյալ: Աշխատանքի մեջ վերլուծության են ենթարկվել «Ազգային կարգի» կուսակցության<sup>16</sup>, «Բարօրություն» կուսակցության<sup>17</sup>, «Արդարություն և զարգացում» կուսակցության<sup>18</sup> տարբեր տարիների ծրագրերն ու հռչակագրերը: Ատենախոսության շրջանակներում ուսումնասիրվող թեմայի տարբեր ասպեկտների վերաբերյալ օգտակար և հետաքրքիր վերլուծություններ և փաստեր են պարունակում տարբեր թուրք հետազոտողների գիտական չհրապարակված թեզերն ու ատենախոսությունները<sup>19</sup>:

<sup>13</sup> Davutoğlu A., Stratejik Derinlik, İstanbul, 2009.

<sup>14</sup> Gagaptay S., The New Sultan: Erdogan and the Crisis of Modern Turkey, London, 2020.

<sup>15</sup> Киреев Н., Очерки политического ислама в Турции, Москва, 2017.

<sup>16</sup> Milli Nizam Partisi Program ve Tüzük, İstanbul, 1970.

<sup>17</sup> Refah Partisi Tüzük ve Programı, Ankara, 1983.

<sup>18</sup> Adalet ve Kalkınma Partisi, Kalkınma ve Demokratikleşme Programı, Ankara, 2002

<sup>19</sup> Vural E., 1984-1997 dönemi İstanbul Büyükşehir Belediye yönetimi uygulamaları, Yayınlanmamış yüksek lisans tezi, İstanbul Üniversitesi, 2005, Asiltürk Y., Türk Siyaset Tarihinde Asker-sivil ilişkileri Kapsamında 28 Şubat Süreci, Yayınlanmamış Yüksek Lisans Tezi, İstanbul Ticaret Üniversitesi, 2022, Akahın, Ö., The Change in Official Islam in Turkey: An Analysis of Friday Sermons Published by the Presidency of Religious Affairs, Unpublished MA thesis, Sabancı University, 2016.

ԱԶԿ կառավարման շրջանում իսլամի ու ազգայնականության սինթեզն ուսումնասիրելու համար կարևոր են Թուրքիայի ղեկավարության՝ հատկապես նախագահ Էրդողանի գրավոր և բանավոր ելույթներն ու հայտարարությունները, որոնք ենթարկվել են մշտադիտարկման և մանրամասն, այդ թվում՝ տեքստաբանական վերլուծության:

**Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ամբողջ ծավալը 204 էջ է:

**Ներածության** մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, ներկայացվում են ատենախոսության նպատակը և խնդիրները, տեսամեթոդական հիմքը, ինչպես նաև քննվում են օգտագործված աղբյուրները, գրականությունը և տրվում է հարցի ուսումնասիրվածության ընդհանուր պատկերը:

Ատենախոսության «Իսլամի ու աշխարհիկության պայքարի առաջին փուլը Թուրքիայում. փոփոխական հաջողությունների շրջան (1920-1960 թթ.)» վերնագրով առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից: «*Քենալականների իսլամական հոռետորաբանությունը. խալիֆայության չեղարկումը*» ենթագլխում ներկայացված են քենալական շարժման ընթացքում իսլամական հոռետորաբանության կիրառման և հասարակական կյանքում կրոնի ազդեցության թուլացման առաջին փորձերը: «*Քենալական բարեփոխումները. աշխարհիկ Թուրքիայի ստեղծումը*» վերնագրով երկրորդ ենթագլուխն անդրադառնում է քենալական աշխարհիկ բարեփոխումներին, նկարագրում դրանց շարժառիթներն ու նպատակները: «*Նահանջ աշխարհիկության սկզբունքից. «քաղաքական իսլամի առաջին դրսևորումները Թուրքիայում. 1938-1960 թթ.»*» վերնագիրը կրող երրորդ ենթագլխում մանրամասն ներկայացվում են 1938 թ. Աթաթյուրքի մահից հետո աշխարհիկության նահանջի դրսևորումները, 1950-60 թթ. «Ժողովրդավարական»

կուսակցության իշխանության շրջանում «քաղաքական իսլամի» գաղափարախոսության էությունն ու դրսևորումները, ինչպես նաև 1960 թ. ռազմական հեղաշրջման պատճառներն ու նախադրյալները:

Ատենախոսության երկրորդ գլուխը վերնագրված է «*«Քաղաքական իսլամի» և «քաղաքական ազգայնականության» գուռահեռ վերելքի առանձնահատկությունները Թուրքիայում 1960-2001 թթ. սահմանափակումներից մինչև վերահսկողության փորձեր*»: Այն կազմված է հինգ ենթագլխից: «*Աշխարհիկության ուժային վերահաստատման և «քաղաքական իսլամի» զգուշավոր վերականգման փորձերը 1960-1970-ական թթ.»*» վերնագրով առաջին ենթագլխում նկարագրվում են 1960 թ. հեղաշրջումից հետո զինվորականության կողմից աշխարհիկության վերահաստատման ջանքերը, ինչպես նաև «Արդարություն» կուսակցության կողմից «քաղաքական իսլամի» քաղաքականության շարունակման զգուշավոր փորձերը: «*Քաղաքական իսլամի» և «քաղաքական ազգայնականության» ինստիտուցիոնալացումը Թուրքիայում. «Ազգային տեսակետի» և «Ազգայնական շարժում» կուսակցության ձևավորումը*» վերնագրով երկրորդ ենթագլուխն անդրադառնում է 1960-ականների վերջին իսլամական և ազգայնական շարժումների ինստիտուցիոնալացմանը, իսլամամետ և ազգայնամոլական կուսակցությունների ձևավորմանն ու գործունեությանը: «*Իսլամամետ և ազգայնական ուժերի ազդեցության ու դերակատարման աճը Թուրքիայի ներքաղաքական կյանքում 1971-1980 թթ.»*» վերնագրով երրորդ ենթագլխում ուսումնասիրվում են 1971-1980 թթ., իսլամամետ և ազգայնական կուսակցությունների գործունեությունը, նրանց դերակատարումը կռալիցիոն կառավարություններում, ինչպես նաև այդ ուժերի գաղափարական փոխակերպումների դրսևորումները: «*Իսլամի և ազգայնականության զարգացումը Բանակի վերահսկողության ներքո. թուրք-իսլամական սինթեզի գաղափարը*» վերնագրով չորրորդ ենթագլխում դիտարկվում են 1980 թ. ռազմական հեղաշրջումից հետո զինվորականության կողմից իսլամամետ և

ազգայնամոլական գաղափարախոսությունների աճը զսպելու և վերահսկելու փորձերը և այդ համատեքստում «թուրք-իսլամական սինթեզի» գաղափարի մշակումը: *«Իսլամի և ազգայնականության զարգացման «փափուկ» ու «կոշտ» ուժի համադրման մեթոդները (1982-2001 թթ.)»* վերնագրով հինգերորդ ենթագլխում նկարագրվում են 1980 թ. ռազմական հեղաշրջումից հետո իշխանության եկած «Մայր Հայրենիք» կուսակցության կողմից իսլամի և ազգայնականության սինթեզի զարգացմանն ուղղված քայլերը, իսլամամետ «Բարօրություն» կուսակցության գործունեություն, կոալիցիոն կառավարության կազմումը, ինչպես նաև «Ազգային տեսակետի» շարժման պառակտումը:

Ատենախոսության երրորդ գլուխը վերնագրված է *«Իսլամի և ազգայնականության սինթեզը որպես Թուրքիայի քաղաքական նոր ինքնություն (2002-2023 թթ.)»* և կազմված է վեց ենթագլխից: *«Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության հաստատումն ու ամրապնդումը. իսլամի և ազգայնականության փոխակերպումների հանգուցալուծումը»* վերնագրով առաջին ենթագլխում ներկայացվում են «Արդարություն և զարգացում» կուսակցության ստեղծման պատմությունը, պատճառներն ու հիմքերը, ԱԶԿ ընտրական հաջողությունները, դրանց պատճառահետևանքային վերլուծությունը: *«Էրդողանական բարեփոխումներ. աշխարհիկ Թուրքիայի հայեցակարգի քաղաքական սրբագրումները»* վերնագրով երկրորդ ենթագլխում անդրադարձ է կատարվում ԱԶԿ շրջանում աշխարհիկ կարգերի թուլացմանն ու իսլամի դերի ընդգծմանն ուղղված բարեփոխումներին, ինչպես նաև կրթական և հասարակական ծրագրերին: *«ԱԶԿ-ի քաղաքական ինքնության հստակեցման գործընթացը. իսլամական և ազգայնական հոետորաբանության ու խորհրդանիշների կիրառումը»* վերնագրով երրորդ ենթագլխում դիտարկվում են ԱԶԿ գաղափարախոսության վրա իսլամամետ, ազգայնամոլ գործիչների ազդեցությունը, ինչպես նաև ԱԶԿ քաղաքական առաջնորդների կողմից կրոնական և ազգայնամոլական հոետորաբանության և խորհրդանիշների

կիրառումը, դրանց պատճառներն ու նպատակները: *«Իսլամի և ազգայնականության սինթեզի դերը Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ»* վերնագրով չորրորդ ենթագլխում ուսումնասիրվում են ԱԶԿ արտաքին քաղաքական օրակարգում իսլամի և ազգայնականության սինթեզի դրսևորումների էությունն ու նպատակները, ինչպես նաև արտաքին քաղաքական օրակարգում իսլամական և ազգայնական լոզունգների ու հոետորաբանության կիրառումը: *«Քաղաքական իսլամի» և «քաղաքական ազգայնականության» սինթեզը. ԱԶԿ-ԱՇԿ դաշինքը»* վերնագրով հինգերորդ ենթագլխում ներկայացվում է ԱԶԿ դաշինքը «Ազգայնական շարժում» կուսակցության հետ՝ որպես իսլամի և ազգայնականության սինթեզի դե յուրե ամրագրում: Ենթագլխում ուսումնասիրվում են նաև դաշինքի գաղափարական և քաղաքական հիմքերն ու պատճառները: Վեցերորդ ենթագլխում, որը կրում է *«Քաղաքական իսլամի» դիվերսիֆիկացիայի միտումները ժամանակակից Թուրքիայում. «Կրկին Բարօրություն» կուսակցության ստեղծումը»* վերնագիրը, քննության են առնվում ԱԶԿ գործունեության արդյունքում «քաղաքական իսլամի» դիվերսիֆիկացիայի օրինակներն ու դրսևորումները ընդգծված իսլամամետ «Կրկին Բարօրություն» կուսակցության օրինակով:

Եզրակացությունում ամփոփվել են ուսումնասիրության վերջնարդյունքները.

- Չնայած քեմալական իշխանության առաջին տարիներին իրականացվող աշխարհիկ գաղափարների ներդրման փորձերին՝ աշխարհիկությունն այդպես էլ չամրապնդվեց հասարակության լայն զանգվածների շրջանում: Աշխարհիկության հաստատմանն ուղղված ազդեցիվ քայլերը հանգեցրին բնակչության պահպանողական, հատկապես գյուղաբնակ շերտի օտարմանը՝ հիմք դնելով հասարակության բևեռացմանը: Ստեղծված իրավիճակը տեսական հնարավորություն ստեղծեց կրոնամետ ուժերի համար հնարավորության դեպքում դառնալ քաղաքական լուրջ

դերակատարներ, ինչը դրսևորվեց Թուրքիայում բազմակուսակցական համակարգի անցնելուց անմիջապես հետո:

- Խիստ աշխարհիկ և արևմտամետ քեմալական ինքնությունը հատկապես Քեմալի մահից հետո սկսեց ուղղակի և անուղղակի առումով ճնշել հավատացյալ պահպանողական շերտին՝ մղելով նրանց այլընտրանքների որոնման: 1950-1960 թթ. Թուրքիայում իշխած «Ժողովրդավարական» կուսակցությունը կարողացավ օգտվել այդ հանգամանքից և վերափոխեց թուրքական քաղաքական դաշտը՝ առաջարկելով «քաղաքական իսլամի» մոդելը որպես այլընտրանք գործող մոդելին: Վերադարձնելով արաբերեն ազանը, վերաբացելով կրոնական դպրոցները և վերստին թույլատրելով կրոնի դերի կարևորումը հասարակության մեջ՝ ԺԿ-ն կարողացավ ստանալ պահպանողական հասարակության լայն աջակցությունը: Կրոնի հետ զուգահեռ ԺԿ-ն իր հոետորաբանության մեջ ներառեց նաև ազգայնականության որոշ տարրեր՝ ներկայացնելով այն որպես թուրքական ինքնության բաղկացուցիչ մաս: Այս քաղաքականությունը հատկապես զբաղվի էր գյուղաբնակ այն շերտերի համար, որոնք որոշ գաղափարական ճնշումների էին ենթարկվել քեմալական ռեժիմի օրոք: «Քաղաքական իսլամի» շնորհիվ ԺԿ-ն կարողացավ թուլացնել քեմալիզմի գաղափարախոսական գերակայությունը՝ հարթակ ստեղծելով հաջորդող ուժերի ու գործընթացի շարունակության համար:
- Բանակը և աշխարհիկ այն ինստիտուտները, որոնց ավանդաբար վերապահված էր «քեմալական աշխարհիկության» պահապանի դերը, չկարողացան կանխել «քաղաքական իսլամի» տարածումն ու լեգիտիմացումը: Չնայած իրականացված ռազմական հեղաշրջումներին ու միջամտություններին (1960, 1971, 1980, 1997 թթ.), դրանք չստացան հասարակական լայն աջակցություն և չկարողացան բավարարել քաղաքական ու մշակութային պահանջները: Հասարակության մեջ կրոնի և

ազգայնականության կայուն ու աճող դերն ի վերջո հանգեցրեց 1960-1970-ական թթ. իսլամի ու ազգայնականության քաղաքական ինստիտուցիոնալացմանը՝ համապատասխանաբար «Ազգային տեսակետի» շարժման և «Ազգայնական շարժում» կուսակցության տեսքով:

- 1980 թ. հեղաշրջումից հետո բանակը փորձեց կանխել իսլամի ու ազգայնականության քաղաքականացումը՝ առաջարկելով «թուրք-իսլամական սինթեզի» տեսլականը՝ իր վերահսկողության ներքո: Պետական մարմինների կողմից հասարակական, կրթական, մշակութային և քաղաքական կյանքում իսլամական տարրերի ներդրումը վերջնականապես լեգիտիմացրեց «քաղաքական իսլամը»: Նոր գաղափարախոսությունը հարմար քաղաքական միջավայր ստեղծեց «Ազգային տեսակետի» շարժման ուժերի գործունեության համար, ինչն էլ հանգեցրեց 1990-ականներին իսլամական «Բարօրություն» կուսակցության ղեկավարած կառավարության կազմավորմանը: Քաղաքականության մեջ զգալիորեն աճեցին նաև ազգայնամուլական տրամադրությունները:
- Բանակը փաստացի թույլ տալով իսլամի ավելի մեծ ընդգրկում հասարակական կյանքի տարրեր ոլորտներ՝ նպատակ ուներ այն պահել վերահսկողության ներքո, սակայն շուտով պարզ դարձավ, որ դա գործնականում անհնար է: Դրան հետևեց նաև Թուրքիայի վարչապետ դարձած Թուրգութ Օզալի կառավարման շրջանում իսլամի և ազգայնականության քաղաքականացումը արդեն «փափուկ ուժի» միջոցով, որն էլ ավելի արագացրեց «թուրք-իսլամական սինթեզի» ծավալումն ու զարգացումը:
- «Բարօրություն» կուսակցության արգելումից և 2001 թ. «Ազգային տեսակետի» պառակտումից հետո հիմնադրված ԱԶԿ-ն, հաշվի առնելով իսլամական նախորդ կուսակցությունների փորձը, որպես կուսակցական գաղափարախոսություն հռչակեց «պահպանողական

ժողովրդավարությունը»: Ժամանակի ընթացքում կուսակցությունն ավելի ցայտուն սկսեց իրականացնել «քաղաքական իսլամի» գաղափարախոսությունից բխող քայլեր՝ դրանք հետզհետե զուգակցելով ազգայնականության հետ: ԱԶԿ-ն նաև զգալի քայլեր կատարեց «հին, աշխարհիկ Թուրքիայի» պաշտպան ինստիտուտների՝ հատկապես Բանակի քաղաքական թուլացման ու ներքին գործընթացներին միջամտելու ներուժի վերացման ուղղությամբ:

- Թուրքիայում «քաղաքական իսլամի» և «քաղաքական ազգայնականության» կուսակցությունների հարաբերությունները, որոնք անցել են մրցակցությունից մինչև համագործակցության փուլեր՝ 2015 թ.-ից հետո բունեցին միավորվելու ուղին, որն էլ դե յուրե արձանագրվեց 2018 թ.-ին: ԱԶԿ-ի ներդրած իսլամի ու ազգայնականության սինթեզն աստիճանաբար դրվեց թուրքական քաղաքական նոր ինքնության հիմքում՝ ժամանակի ընթացքում ստանալով ծայրահեղական դրսևորումներ:
- ԱԶԿ-ի կողմից իսլամի ու ազգայնականության հիմքի վրա նոր ազգային-պետական-քաղաքական ինքնության մոդելի ձևավորումը փաստացի հակազդեցություն էր ինքնության քեմալական մոդելին, որը գերիշխող դեր էր ունեցել Թուրքիայում հանրապետության հիմնադրումից ի վեր: ԱԶԿ-ն, թուրքական ազգայնականությունը սինթեզելով իսլամական արժեքների հետ, վերաձևակերպեց «թրքության» գաղափարը: Էրդողանի բառերով՝ «թուրք միևնույն ժամանակ նշանակում է մուսուլման»: Այս սինթեզը թույլ տվեց ԱԶԿ-ին իր շուրջը հավաքել կրոնա-պահպանողական և պահպանողական-ազգայնական շերտերին՝ դիրքավորելով իրեն որպես երկրի պատմական ու մշակութային ժառանգության ճշմարիտ ներկայացուցիչ:
- Իսլամի և ազգայնականության սինթեզը, որպես նոր Թուրքիայի պետական ինքնություն, դրսևորվում է թե՛ ներքին, թե՛ արտաքին և թե՛ քարոզչական

քաղաքականության մեջ պաշտոնական հռետորաբանության ու խորհրդանիշների միջոցով: Թուրքիայի նոր քաղաքական ինքնությունն իր բնութիվ ազդեալի է, լի ծավալապաշտական նկրտումներով՝ ուղղված ինչպես անմիջական հարևան պետություններին, այնպես էլ ավելի լայն տարածաշրջանին:

### Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝

1. Hovhannisyan G., Turkey's expansion in Eastern Africa: The case of Somalia, Contemporary Eurasia, Yerevan, 2022, XI, pp. 44-57.
2. Հովհաննիսյան Գ., Ադնան Մենդերես-Ռեջեփ Թայիփ Էրդողան. «քաղաքական մարտիրոսի» «քաղաքական ժառանգորդը», Արևելագիտության հարցեր, Երևան, 2023, XXIII, էջ 118-142:
3. Մելքոնյան Ռ., Հովհաննիսյան Գ., Օսմանյան վերջին խալիֆը և իսլամական խալիֆայության ավարտը. Արդուլ Մեջիդ Երկրորդ, Արևելագիտության հարցեր, Երևան, 2023, XXIV, էջ 311-331:
4. Հովհաննիսյան Գ., Ազգայնամուլական խորհրդանիշները Թուրքիայի քաղաքական հռետորաբանության մեջ XXI դարում, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2024, թիվ 2 (671), էջ 138-150:
5. Հովհաննիսյան Գ., Թուրք-իսլամական սինթեզը. քաղաքական արկածախնդրությունից մինչև ազգային ռազմավարություն (1960-ականներից մինչև 1983 թ.), Արևելագիտության հարցեր, Երևան, 2024, XXV, էջ 192-215:
6. Հովհաննիսյան Գ., «Քաղաքական իսլամի» զարգացման միտումները Թուրքիայում 21-րդ դարում. Բարօրություն կուսակցության «վերադարձը», Գիտական Արցախ, Երևան, 2024, թիվ 3 (22), էջ 116-133:

7. Бочаров В., Гегамян В., Оганесян Г., От рабиа до реиса: символы власти ПСР в дискурсе исламского национализма в Турции, Вестник Санкт Петербургского Университета. Востоковедение и Африканистика, том 22 (3), Санкт Петербург, 2025.

GOR ARTHUR HOVHANNISYAN

DYNAMICS OF POLITICAL IDENTITY CHANGES DURING THE YEARS OF GOVERNANCE OF AKP. THE SYNTHESIS OF ISLAM AND NATIONALISM

The dissertation is submitted for pursuing the Scientific Degree of the Candidate of Historical Sciences in the field of "World History" 07.00.02. The defense of the dissertation will take place on December 18 th, 2024, at 14:00 at the meeting of the HESC Specialized Council 006 at the Institute of Oriental Studies of NAS RA. Address:

Yerevan, 0019, Marshal Baghramyan Ave., 24/4.

SUMMARY

The synthesis of Islam and nationalism in Turkey's socio-political sphere marks a significant shift from the early Kemalist secularism, steering the nation toward a more religious and nationalistic political identity. This synthesis, intensifying in recent years, introduces Islamic elements within nationalist rhetoric, redefining Turkish identity in domestic and international contexts. The origins of the synthesis lie in a complex coaction of Islamic and nationalist pursuits that Turkish authorities have occasionally summoned to secure political authority and promote social unity. This subject captures a continuous tension between secular and religious wings, where each ideological wing reflects the ruling elites' shifting priorities and public expectations. This dissertation investigates the historical progression of this synthesis, analyzing how the integration of Islamic values into national identity operates as both a symbolic expression and a strategic tool within Turkey's political narrative, reproducing deep shifts in Turkish society and statecraft. The dissertation paper consists of Introduction, three Chapters, Conclusion, and References.

The Introduction justifies the topic of the dissertation paper and represents the scientific novelty of the research, theoretical-methodological foreground, as well as reviews of the sources included in the paper.

The first chapter, entitled "The first phase of the struggle between Islam and Laicism in Turkey: Period of shifting successes (1920s-1960)" consists of three sub-chapters, which analyze the tendencies of the changeable nature of the struggle between Islam and Laicism in the early republican period, starting from the Kemalist nationalistic movement and till the 1960 coup d'etat.

The second chapter, named "Characteristics of the Parallel Rise of "Political Islam" and "political nationalism" in Turkey from 1960 to 2001: from Limitations to Controlling Attempts" consists of five sub-chapters, which examine the rise of both "Political Islam" and "Political Nationalism" in Turkey, starting from the establishment of the first openly Islamic and nationalistic parties in the late 1960s till the ban of the "Refah" Party in 1998 and the creation of "Justice and Development" Party in 2001. The chapter also particularly focuses on the state's attempts to control both ideologies by introducing the "Turkish-Islamic Synthesis".

The third chapter, titled " Synthesis of Islam and Nationalism as the new political identity of Turkey (2002-2023)", consists of six sub-chapters, which study the gradual mixture of Islam and nationalism during the "Justice and Development" Party's reigning period, focusing on the reasons, motives and aims behind it and exploring its effect on both domestic and foreign issues.

The Conclusion sums up the main results of the research undertaken within the frames of our dissertation paper.

ГОР АРТУРОВИЧ ОГАНЕСЯН

ДИНАМИКА ИЗМЕНЕНИЯ ПОЛИТИЧЕСКОЙ ИДЕНТИЧНОСТИ ЗА ГОДЫ  
АДМИНИСТРАЦИИ ПСР. СИНТЕЗ ИСЛАМА И НАЦИОНАЛИЗМА

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 - "Всемирная история". Защита состоится 18 декабря 2024 года, в 14:00 на заседании специализированного совета 006 "Всемирная история" КВОН РА действующего при Институте Востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна 24/4.

РЕЗЮМЕ

Синтез ислама и национализма в социально-политической сфере Турции знаменует собой значительный сдвиг от раннего кемалистского секуляризма, направляя нацию к более религиозной и националистической политической идентичности. Этот синтез, усиливающийся в последние годы, вводит исламские элементы в националистическую риторику, переопределяя турецкую идентичность во внутреннем и международном контекстах. Истоки синтеза лежат в сложном взаимодействии исламских и националистических устремлений, которые турецкие власти время от времени призывали для обеспечения политической власти и содействия социальному единству. Эта тема охватывает постоянное напряжение между светским и религиозным крылом, где каждое идеологическое крыло отражает меняющиеся приоритеты правящей элиты и общественные ожидания. В этой диссертации исследуется историческое развитие этого синтеза, анализируется, как интеграция исламских ценностей в национальную идентичность действует как символическое выражение и стратегический инструмент в политическом повестке Турции, воспроизводя глубокие сдвиги в турецком обществе и государственном управлении.

Диссертация состоит из введения, трех глав с соответствующими подглавами, заключения, списка использованной литературы и приложений.

Во Введении обосновывается актуальность темы, представляются цель, задачи, научная новизна, теоретико-методологическая база исследования, а также обсуждаются представленные источники литературы.

Первая глава под названием «Первый этап борьбы между исламом и лаицизмом в Турции: период переменных успехов (1920-е-1960-е годы)» состоит из трех подглав, в которых анализируются тенденции переменчивого характера борьбы между исламом и лаицизмом в ранний республиканский период, начиная с кемалистского националистического движения и до государственного переворота 1960 года.

Вторая глава под названием «Характеристики параллельного подъема «политического ислама» и «политического национализма» в Турции с 1960 по 2001 год: от ограничений к попыткам контроля» состоит из пяти подглав, в которых рассматривается подъем как «политического ислама», так и «политического национализма» в Турции, начиная с создания первых открыто исламских и националистических партий в конце 1960-х годов до запрета партии «Благоденствия» в 1998 году и создания партии «Справедливости и развития» в 2001 году. В главе уделяется особое внимание попыткам государства контролировать обе идеологии путем внедрения «турецко-исламского синтеза».

Третья глава, озаглавленная «Синтез ислама и национализма как новая политическая идентичность Турции (2002–2023 гг.)» состоит из шести подглав, в которых изучается постепенное слияние ислама и национализма в период правления партии «Справедливость и развитие». В главе также особое внимание уделяется причинам, мотивам и целям этого слияния, а также его влиянию на внутренние и внешние дела страны.

В заключении обобщаются выводы полученные в результате исследования, предпринятого в рамках настоящей диссертационной работы.

